եւ Ապառաժ Արաբիոյ, մտեալ ի մէջ խորշիցն Կարմիր ծովուն, իբրեւ ցամաքակղզի: 228 *Սահմանի ի մտից Արաբաց[ւ]ոց*[1] *ծովուն, առ երկճղից մինչեւ ցնեղուց նորա, իսկ ի հարաւո[յ]՝ ի Պաղինդիոս ծայրէ մինչեւ* ʰ*ցՎարազ*[2] *ծայր, եւ ունի մինչեւ ցնեղուցն Կրմանա[յ]*[3], [31բ] *որ է ելք Պարս[կ]ային*[4] *ծոցոյն:* 229 *Սահմանի յելից կուսէ եւ նովիմբ ծովեզերբն:* 230 *Սահմանի ըստ հիւսիւսո[յ]*[5] *մինչեւ ցնոյն Անապատն Արաբիա, [յ]որում*[6] *բնակեն ազգազաւառք յիսուն եւ չորս*[7], *յորոց մինն է Սաբաաց[ւ]ոց*[8] *ազգն Նիկիփառ, եւ Միւռիտին, որ է Խնկաբեր*[9] *երկիրն եւ Զմռսաբեր երկիրն, եւ միւսն է ազգ Զկնակեր, եւ մի՝ Վրանաւորք:* 231 *Ունի լերինս տասն*[10], *յորոց մինն՝ Կղիմաքսա[յ]*[11], *որ է «Սանդուխք»*[12], *եւ մին*[13]*՝ Կնդրկի լեառն:* 232 *Գետս ունի չորս*[14], *եւ աղբիւր՝ մի, յոր աղբիւր դիքն երդնուին, վասն անչափ ցրտութեան՝ Ստեղոս անուն:* 233 *Ունի կղզի մի, երկայնութեամ[բ]*[15]*՝ մղոնս երկուհարիւր քառասուն*[16], *եւ լայնութեամբ՝ քառասուն*[17], *որ կոչի Դիոսկոռիդոն, եւ այլ եւս կղզիս մանունս երեսուն եւ ինն*[18], *յորոց մին կոչի «Գազանաց կրայից»:* 234 *Իսկ ըստ յելից կուսէ Սաբէլիտեան*[19] *ծոցին՝ կղզիքն*[20] *ութ*[21]: 235 *Եւ ունի զսահմանս իւր ընդ ծով եւ ընդ ցամաք, յերկայնութիւն՝ մասունս քսան եւ ութ*[22], *իսկ ի լայնութիւն՝ մասունս քսան եւ մի*[23]: 236 *Եւ է ըստ հարաւա[յ]ին ծայրի նորա Անծանաւթ երկիր եւ Բարբառիկոն պեղագոսն:*

237 *Եւ է երկիր ամենաբեր*[24] *ոսկ[ւ]ոյ*[25] *եւ ականց, արծաթո[յ] եւ մարգարտի, ուստի եկն տիկինն առ Սողոմոն՝ բերելով փայտս անտաշս, անփուտս,* [32ա] *քաջահնչողս:* 238 *Եւ որ ինչ ամենայն երկրի պատուականք են՝ ի ձեռն նաւուց, որ անդր*[26] *երթան՝ գտանի, [է, որ յիւրմէ*[27] *աշխարհէն, եւ է, որ ի վաճառուց՝ եկելոցն]*[28] *ի Ճէնաց*[29] *գտանի՝ կարճո[յ] ընդ ծովն Հնդկաց, եւ Պարսից՝ նոյնպէս:* 239 *Արդ, ամենայն բարեաց ընդունիչ է նա, եւ [յ]ամենայն*[30] *վնասակարաց՝*

---

1 *V* Արաբացոց *փխ* Արաբացւոց (*վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324*)

2 *V* ի ցՎարազ *փխ* ʰցՎարազ (*վեր. Սուքրեանի՝ ըստ բազմաթիւ այլոց*)

3 *V* Կրմոնա *փխ* Կրմանայ (*վեր. Սուքրեանի՝ ըստ նախորդի եւ յաջորդի* (*նախ. Բ.17, Ե.269*), *որը նաեւ ծանօթագրում է.* «Յօր. *Կրմնայ*»)

4 *VS* Պարսային *փխ* Պարս[կ]ային (*վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Ե.120, 143, 144*)

5 *V* հիւսիւսո *փխ* հիւսիսո[յ] (*վեր. Սուքրեանի՝ ըստ բազմաթիւ այլոց*)

6 *V* որում *փխ* յորում (*վեր. Սուքրեանի*)

7 *V* ծ̅ղ̅ (*համառօտի AE-ում թիւը նոյնն է, իսկ DPv-ում*՝ յիսուն եւ երիս. *տե՛ս բոլորագիր* **դ** → **գ**)

8 *VS* Սաբաացոց *փխ* Սաբաաց[ւ]ոց (*վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324*)

9 *V* կնգաբեր, *S* Խնգաբեր *փխ* Խնկաբեր (*վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Ե.20, 40, 58, 177, 312. V-ի գրիչը, կարծես, նկատել է իր վրիպումը եւ սկզբնատառ* **կ**-*ի վրայ կայծակնաձեւ նշան դրել*)

10 *V* ժ̅ (*համառօտի AE-ում թիւը նոյնն է, իսկ DPv-ում*՝ երկոտասան)

11 *V* Կդիմաաքա, *S* Կլիմաքս *փխ* Կղիմաքսա[յ] (*վեր., տե՛ս բոլորագիր* **ղ** → **դ** *եւ* **քս** → **քա** → **աք** *անցումն ու դրափոխութիւնը*)

12 *S* Սանդուղք *փխ* Սանդուխք (*V*)

13 *S* մինն *փխ* մին (*V. հմմտ. նախ. Բ.24, Գ.31, Դ.31, Ե.219 եւն*)

14 *V* դ̅ (*համառօտի AE-ում թիւը նոյնն է, իսկ DPv-ում*՝ երիս. *տե՛ս բոլորագիր* **դ** → **գ**)

15 *V* երկայնու̅է̅ *փխ* երկայնութեամբ (*վեր. Սուքրեանի՝ ըստ յաջորդ տողի՝* լայնու̅բ̅. *տե՛ս ուշ երկաթագիր* **Բ** → **Ե**)

16 *V* մ̅խ̅

17 *V* խ̅

18 *V* լ̅թ̅ (*համառօտում՝ միայն* «կղզիս բազումս»)

19 *V* Սաբելիտէան *փխ* Սաբէլիտեան (*վեր. Սուքրեանի. տե՛ս բոլորագիր* **ե** → **է** → **ե**)

20 *S* կղզիք *փխ* կղզիքն (*V*)

21 *V* ը̅

22 *V* ի̅ը̅

23 *V* ի̅ա̅

24 *V-ում՝* ա̅մաբեր *է, որ կարող է վերծանուել նաեւ՝* ամ^ենայն^աբեր, *թէպէտ համառօտում եւս* ամենաբեր *է*

25 *VS* ոսկոյ *փխ* ոսկ[ւ]ոյ (*վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324*)

26 *V* անտր *փխ* անդր (*վեր. Սուքրեանի. տե՛ս բարբառային* **Դ** → **Տ**. *հմմտ. նախ. Ա.39, Բ.37, Ե.74*)

27 *AE* իւրմէ *փխ* յիւրմէ (*DPv*)

28 *DPv* վաճառաց՝ եկաց *փխ* վաճառուց՝ եկելոցն (*AE*) / *VS չիք* է, որ … եկելոցն (*1 տող*) (*վեր.՝ ըստ համառօտի. տե՛ս* գտանի … եկելոցն **ի**)

29 *S* Ճենաց *փխ* Ճէնաց (*V. հմմտ. Ե.285, 328, 330*)

30 *V* ա̅մ *փխ* [յ]ամենայն (*վեր. Սուքրեանի՝ ըստ յաջորդող* **ի** *նախդիրերի*)